ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ

Ուրարտական հնությունների հայտնաբերումը հետզհետե դառնում է Իրանի, հատկապես նրա հյուսիս-արևմտյան շրջանների, հնագիտության բնորոշ կողմերից մեկը։ Դեռևս անցյալ դարում հիշյալ շրջաններում գտնվել էին մի շարք ուրարտական առարկաներ։ Մեր ժամանակներում, 40-ական թթ. վերջերին, Ղարադաղի լեռներում, Թավրիզից հյուսիս-արևելք, Վարզաղան բնակավայրի մերձակայքում հայտնաբերվեց ուրարտական սեպագիր մի արձանագրություն, որը պատմում է Սարդուրի II (760—730 ն. մ. թ.) թագավորի այս շրջանում ծավալած գործունեության մասին[1]։

Վերջերս հայտնի են դարձել նոր, էլ ավելի հետաքրքիր նյութեր, որոնց նշանակությունը Ուրարտուի և Իրանի պատմության համար մեծ է։ Թավրիզից Արդերիլ տանող ճանապարհի վրա գտնվող Սարաբ բնակավայրից հյուսիս, Սավալան լեռների հարավային լանջերին հայտնաբերվել են երկու սեպագիր արձանագրություններ, որոնց ուրարտական բնույթը անկասկած է[2]։ Արձանագրությունները փորագրված են իրարից ոչ շատ հեռու գտնվող ժայռերի վրա, ունեն միանման բովանդակություն, թեպետ տարբերվում են իրարից մեծությամբ։ Առաջինը (նկ. 1, ա), որը ավելի մեծ է և ամբողջական, բաղկացած է 16 տողից՝ տողի երկարությունը 107 սմ։ Երկրորդը (նկ. 1, բ) ունի վնասվածքներ և բաղկացած է 12 տողից՝ տողի երկարությունը 102 սմ։

Արձանագրությունները դրոշմված են Ռուսա I-ի որդի Արգիշտի II (714—685 ն. մ. թ.) թագավորի անունից։ Արդեն այս տեսակետից նրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ մինչև վերջերս գիտությանը հայտնի էին Արգիշտի II-ի ընդամենը երեք արձանագրություններ։

Նորագյուտ արձանագրություններում Արգիշտի II-ը խոսում է Ուրարտուին հարավ-արևելքից հարևան տերիտորիայում կատարած արշավանքների մասին և հիշատակում է բազմաթիվ երկրներ, քաղաքներ և ամրոցներ, որոնք նվաճվել են և միացվել ուրարտական պետությանը, իսկ բնակչությունը՝ հարկատու դարձվել։

Արձանագրությունների տվյալները վերջնականապես փոխում են մեր պատկերացումները Արգիշտի II-ի մասին, որպես անձեռներեց թագավորի, թեպետ հայտնի է, որ նրա օրոք Ուրարտական պետության հարավային սահմանը անցնում էր Ասորեստանի կենտրոնական մարզերի մոտով[3]։ Նորագյուտ արձանագրությունները դրսևորում են այն ակտիվ քաղաքականությունը, որը վարում էր Ուրարտուն հյուսիսային Իրանում, և վկայում են, որ Սարգոն II-ի խորտակիչ հարվածներից հետո, կարճ ժամանակում Ուրարտական պետությունը կարողացել էր ոտքի կանգնել։

Պակաս հետաքրքիր չեն ուրարտական մյուս գյուտերը Իրանի տերիտորիայում։ Խոսքը ձիու բրոնզյա աչքակալների մասին է, որոնք հայտնաբերվել են Գիլանի մարզի ծայրամասում, Դիլմանի լեռնհրում, մի ուշագրավ դամբարանադաշտի պեղումների ընթացքում և այժմ մասն են կազմում հնահավաք Մոհսեն Ֆուրուղիի հավաքածուի[4]։ Առաջին աչքակալը, որը իր ձևով պայմանականորեն կոշիկի ներբան է հիշեցնում (երկարությունը՝ 17 սմ, լայնությունը՝ 8,8 և 5,5 սմ, նկ. 2ա), փորագիր ոսկեզօծ զարդեր ունի՝ բողբոջների երկու շարքից կազմված։ Նրա վրա փորագրված է նաև Մենուա թագավորի անունը հիշատակող սեպագիր արձանագրություն։ Երկրորդ աչքակալը (նկ. 2բ) նույն ձևի և չափերի է, բայց անզարդ է։ Այն նույնպես ունի արձանագրություն, որը հիշատակում է Արգիշտի թագավորի անունը։

---

[1] Г. А. Меликишвили, Новая урартская надпись из Иранского Азербайджана, «Вестник Древней Истории», 1960, № 3, էջ 3—11։

[2] W. C. Benedict, Two Urartian inscriptions from Azerbaijan, Journal of Cuneiform Studies, vol. XIX, 1965, № 2, էջ 35—40։

[3] Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 111—112։

[4] R. Ghirshman, Notes Iraniennes XIV, Deux oeilleres en bronze des rois d'Urartu. Artibus Asiae, vol. XXVII, 1/3, Ascona, 1964, pp. 49—60, fig. 1—2.



Vh. 1m



Vh. 1p



Vk. 2w



Vk. 2p

Հետաքրքիր է նշել, որ նման առարկաներ հայտնաբերվել են 1954 թ. Կարմիր բլուրում։ № 41 սենյակում գտնվել են ձիու լծասարքի բազմաթիվ առարկաներ, այդ թվում նաև երեք բրոնզյա աչքակալներ, որոնք իրենց ձևով ու զարդերով շատ նման են վերևում նկարագրվածներին։

Դիլմանի լեռներում ուրարտական նման առարկաների հայտնաբերումը հավասար չափով հետաքրքրություն է ներկայացնում ինչպես Ուրարտուի, այնպես էլ Իրանի պատմաբանների ու հնագետների համար։

Կասպից ծովի հարավ-արևմտյան մասերում, վերջին տարիներին կատարված պատահական գյուտերի շնորհիվ, բացահայտվել է մի նոր քաղաքակրթություն, որը հայտնի է Ամլաշի անվան տակ։ Այն բնորոշվում է նյութական մշակույթի (հատկապես մետաղագործության և խեցեգործության) ընդգծված յուրահատկությամբ։ Ամլաշում գտնված մի շարք առարկաներ առաջին անգամ ցուցադրվել են Իրանական արվեստի Փարիզի ցուցահանդեսում[6]։ Վերջերս, Իրանի այս նույն շրջանում, Ռուդբարի մոտ գտնվող Մարլիկ վայրում, Թեհրանի թանգարանի արշավախումբը պեղել է մի շարք դամբարաններ, որտեղից նույնատիպ նյութեր են հայտնաբերվել[7]։ Նրանց ճիշտ թվագրումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ նորահայտ այս քաղաքակրթության նշանակությունը իրանական սարահարթի նյութական մշակույթի պատմության համար առաջնակարգ է։ Պարզորոշ թվագրվող ուրարտական աչքակալների հայտնաբերումը այս նույն միջավայրում, անկասկած, կարևոր կովան է Իրանի վերոհիշյալ տերիտորիայի նյութական մշակույթի ժամանակագրությունը որոշելու համար։

Հեռավոր Գիլանում ուրարտական առարկաների գյուտի նշանակությունը չի սպառվում վերոհիշյալով։ Այն նոր լույս է սփռում ուրարտա-իրանական հարաբերությունների վրա։

Դամբարանները, որտեղ գտնվել են աչքակալները, տեղադրվում են Իրանի այն մասում, որը հնում սեպագիր արձանագրություններում կոչվում էր Անդիա երկիր։ Ռուսա I-ի օրոք այս երկիրը դաշինք է կնքում Ուրարտուի հետ։

Մի շարք ենթադրություններ կարելի է անել ուրարտական առարկաների այս շրջանում հայտնվելու կապակցությամբ։ Ուրարտուի թագավորները կարող էին նվիրած լինել աչքակալները Անդիա երկրի իշխանին կամ որևէ մեծամեծի։ Բացառված չէ, որ լեռնային այս երկրամասի բնակիչները, որոնք անտիկ հեղինակների մոտ հանդես են գալիս կադուսիացիների անվան տակ, հարձակվել ու կողոպտել էին ուրարտական որևէ կենտրոն և որպես ավար իրենց հետ բերել այս առարկաները։ Հնարավոր է նաև, որ աչքակալները հասել են այստեղ արշավող ուրարտական բանակի հետ միասին։

Սարդուրի II-ի և Արգիշտի II-ի՝ Իրանի հյուսիս-արևմուտքում հայտնաբերված արձանագրությունների տվյալներից երևում է, որ ուրարտացիները նվաճել են պատմական Ատրպատականի որոշակի մասերը։ Հնարավոր է, որ այստեղից ուրարտացիները արշաված լինեն դեպի մերձկասպյան շրջանները, որտեղ այդ ժամանակ իր զարգացումն էր ապրում մի ինքնատիպ մշակույթ։

Հետաքրքիր է նշել, որ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տեղեկությունների համաձայն, Կասպից երկիրը նվաճելուց հետո հայոց թագավոր Արտաշեսը արշավանք է կազմակերպում դեպի լեռնոտ այն երկիրը, որը կոչվում էր Պատիժահար, և որը, թեկուզ մասամբ, համընկնում էր ուրարտական առարկաների հայտնաբերման վերոհիշյալ վայրի հետ։

Ուրարտա-իրանական պատմական կոնկրետ աղերսներ արտացոլող նորագյուտ նյութերի հետագա ուսումնասիրումը անկասկած կնպաստի մի հետաքրքիր պրոբլեմի լուծմանը, այն է՝ իրանական նյութական մշակույթի և արվեստի կազմավորման գործում ուրարտական քաղաքակրթության ներդրման բացահայտմանը։

Գ. ՏԻՐԱՑՅԱՆ

---

[5] Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, Ереван, 1955, էջ 23։

[6] Sept Mille ans d'art en Iran, Paris, 1962.

[7] E. Negahban. Marlik, Tehran, 1964.

АРМЯНСКАЯ ГАЗЕТА В ОДЕССЕ

Настоящая заметка преследует очень скромную цель. Мы хотим привлечь внимание читателей к одному периодическому изданию, которое, как нам представляется, не лишено некоторого значения как источник по истории армянского народа в годы гражданской войны в СССР.

Речь идет о газете «Вестник Армении», выходившей в Одессе в 1919—1920 гг. Полный ее комплект хранится в Одесской госу-